

ՍՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ*

հայցորդ,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
st.petoyan@gmail.com

ՇՈՒՇԻԻ ՄԱՀՏԵՍԻ-ՀԱԿՈՐՅԱՆՑՆԵՐԻ ՏՊԱՐԱՆԸ (1877-1905 թթ.)

Բանալի բառեր՝ Շուշի, տպարաններ, Մահտեսի-Հակոբյանցներ, գիրք, մատենագիտություն, Հրաչյա Աճառյան, Պետրոս Դուրյան:

Ներածություն

Շուշիում տպագրությունն սկիզբ է առել 1828 թ., որի նախադրյալը դարձավ Շվեյցարիայի Բազել քաղաքի Ավետարանական քարոզչական ընկերության գործունեությունը տարածաշրջանում: Իսկ մինչ այդ՝ 1827 թ., նույն բողոքական քարոզիչների ջանքերով Շուշիում արդեն կազմավորվել էր իրենց տպարանը¹: Հիշյալ քարոզիչների՝ Շուշիում ունեցած գործունեության ամբողջական դադարից հետո (1837 թ.) տպարանը ձեռք է բերում Ղարաբաղի նորաստեղծ թեմի առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանը²: Այս տպարանը վայրիվերումներով և դադարներով, ինչպես նաև տպագրական սարքավորումների համալրմամբ և արդիականացմամբ գործում է մինչև 1907 թվականը³: Այդ ընթացքում Շուշիի տպարանում հրատարակված գրքերի վրա մինևույն տպարանը հիշատակվում է տարբեր անվանումներով՝ «Ի տպարանի Բարձր Սրբազան Մետրապոլիտ Վիճակին Ղարաբաղու Տեառն Բաղտասարայ», «Ի տպարանի Նորին Բարձր Սրբազնութեան», «Ի տպարանին Շուշույ, ընծայեցելոյ Մայր Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի ի հանգուցեալ Բարձր Սրբազան Մետրապոլիտ Բաղտասար Արք Եպիսկոպոսէն Հասան-Ջալալեանց», «Ի տպարանի Հոգեւոր դպրոցին հայոց Ղարաբաղու», «Տպա-

* Հոդվածը ներկայացվել է 08.02.21, գրախոսվել է 07.05.21, ընդունվել է տպագրության 02.08.21:

¹ Շուշիում քարոզիչների տպարանի և տպագրական գործունեության մասին մանրամասն տե՛ս **Պետոյան 2021**:

² **Լէօ** 1914, 121-122:

³ «Ղարաբաղ» 1912, № 58 (Տպագրական գործը Շուշիում):

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

րան Հայոց Հոգևոր տեսչության»։ Շուշիի գրատպության պատմության մեկ-դարյա ժամանակատվածում հրատարակված գրքերի անվանաթերթերին հանդիպում են նաև Շուշիում գործած մասնավոր մի քանի այլ տպարանների անուններ՝ «Ի տպարանի Մինասի Մ. Տառլիճեանց», «Տպարան Բագրատ Տէր-Սահակեանցի», «Տպարան Մելքում Բաբաջանեանցի», «Ի տպարանի Միրզաջան Մահտեսի-Յակոբեանց», «Տպարան Աազ Մ. Մահտեսի-Յակոբեանցի» և «Տպարան Եղիսաբէթ Մ. Մահտեսի-Յակոբեանցի»։

Մահտեսի-Հակոբյանցների տպագրական գործունեությունը

Շուշիում գործած տպագրական նշանավոր օջախներից էր Մահտեսի-Հակոբյանցների տպարանը։ 1878 թ. ապրիլի 8-ին «Մշակ» թերթում հրատարակված «Նամակ Շուշուց» հոդվածում կարդում ենք, որ Շուշիում այդ ժամանակ գործել է երկու տպարան. «Մինի մէջ երբեմն ատետարան կամ սաղմոս են տպում, մնացած ժամանակումն էլ մկներ են խաղում կազմարար տէրտէրի փէշի տակ թագ կացած, իսկ միաում, որ դեռ նոր է, տպում են ոսկէվարագ հարսանիքի հրաւերներ...»⁴։ Հոդվածագիրը, անկասկած, առաջին տպարանի դէպքում նկատի ունի Հայոց հոգևոր տեսչության տպարանը, որն ուներ առավելաբար կրոնական և կրթական ուղղվածություն։ Տպարանը թեմի կարիքների համար հրատարակում էր ինչպես որոշ ծիսական գրքեր, այնպես էլ Շուշիում գործող թեմական դպրոցի համար դասագրքեր։ Իսկ երկրորդ տպարանի դէպքում հոդվածագիրը նկատի ունի Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցի տպարանը, որը նոր շունչ հաղորդեց Շուշիի գրահրատարակչական աշխատանքներին՝ առավելաբար հրատարակելով գեղարվեստական, թարգմանական, ժամանցային բնույթի գրքեր, դասագրքեր և այլն։

Ավելի ուշ՝ 1897 թ., Շուշիի կրթական և մշակութային կյանքին առնչվող մեկ այլ հոդվածում դարձյալ հիշատակվում են Հայոց հոգևոր տեսչության և Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցի տպարանները։ Այս հոդվածագիրն արդեն նշում է, թե առաջին տպարանին վերաբերող վավերագրերն այնքան ցաքուցրիվ էին պահվում, որ, հակառակ իր բոլոր ջանքերին, այդպես էլ չի կարողացել իմանալ, թե մինչ այդ պահը տպարանում քանի՞ գիրք է տպագրվել, իսկ տպագրական «մամուլը բաւական փոքր է և բազմատեսակ տառեր չունի»։ Իսկ երկրորդ տպարանի մասին խոսելիս հոդվածագիրը հիշատակում է,

⁴ «Մշակ» 1878, № 57 (Նամակ Շուշուց)։

որ այն հիմնադրվել է 1877 թ. նոյեմբերին, ունի «բաւական լաւ մամուլ և նոր ձևի տառեր»⁵:

Իսկ ի՞նչ է հայտնի տպարանի հիմնադրման մասին Շուշիի գրատպության առնչվող հետագա աղբյուրներում: Ուսումնասիրողները հիմնականում խոսափում են կոնկրետ թվական նշելուց՝ որպես տպարանի հիմնադրման ժամանակահատված հիշատակելով 1880-ականների սկիզբը⁶, իսկ լավագույն դեպքում՝ 1881 թվականը⁷:

Այս տպարանի՝ մեզ հայտնի անդրանիկ գիրքը («Պատմութիւն մտաւոր զարգացման Եւրոպիոյ»⁸) հրատարակվել է 1879 թվականին, ինչն ինքնին հերքում է տպարանի՝ 1880 և ավելի ուշ թվականին հիմնադրված լինելու վերաբերյալ գիտական գրականության մեջ տարածված տեսակետները: Նույն գրքից միաժամանակ տեղեկանում ենք, որ 1878 թ. ապրիլի 28-ին՝ մինչև հրատարակությունը, այն նախապես գրաքննվել է Թիֆլիսում: Պետք է նաև նկատի ունենալ, որ այս գիրքը տպարանի անդրանիկ հրատարակությունը չէ, քանի որ դրանից առաջ տպագրվել են հրավիրատոմսեր, ինչի մասին վկայում է վերը հիշատակված «Նամակ Շուշուց» հոդվածը⁹: Մյուս կողմից՝ նորաստեղծ տպարանի կարողությունից վեր էր որպես առաջին հրատարակություն տպագրել մի այնպիսի ծավալուն հատոր, ինչպիսին 430 էջանոց այս գիրքն էր:

Վերջինիս ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ տպագրական աշխատանքների համար տպարանն ունեցել է հայերեն երկու, ռուսերեն և լատիներեն մեկական տառատեսակներ: Գրքում քիչ չեն տպագրական վրիպակները, որոնց երեք էջանոց ցանկը տեղ է գտել բնագրի վերջում: Հետաքրքրական է, որ 1880 թ. հրատարակված մի հոդվածում ոչ միայն խոսվում է այս գրքի կարևորության, թարգմանական որակի, այլև դրանում առկա տառասխալների և տպագրական վրիպակների մասին: Ըստ հոդվածագրի՝ դրանք ոչ թե արդյունք են թարգմանչի անփութության, այլ տպարանատիրոջ անբարե-

⁵ «Ազգագրական հանդէս» 1897, 107:

⁶ Լևոնյան 1946, 232: Իշխանյան 1981, 113:

⁷ Թէոդիկ 1912, յաւելուածի 2: Ավագյան 1989, 64: Սևյան 1991, 97: Տեր-Գասպարյան 1993, 91: Հարությունյան Միհր 2010, 31: Հարությունյան Մարինե 2010, 59: Բալայան 2017, 234:

⁸ Տե՛ս Դրէպէր 1879:

⁹ «Մշակ» 1878, № 57 (Նամակ Շուշուց):

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

խիղճ մոտեցման: Ավելին՝ այս տպարանը որոշ տառեր չի ունեցել, ինչպես «փ» տառը, որի փոխարեն կիրառվել է «փ» տառամիացությունը¹⁰:

Պետք է նշել, որ այս տպարանի հրատարակությունները կանոնավոր կերպով գրաքննվում էին Կովկասի գրաքննական կոմիտեի կողմից¹¹: Այսպես, «Պատմութիւն մտաւոր զարգացման Եւրոպիոյ» գրքի անվանաթերթի դարձերեսից տեղեկանում ենք, որ այն գրաքննվել է ավագ գրաքննիչ Սողոմոն խան Մելիք-Մեհրաբովի կողմից, ով հայտնի էր իբրև «ծայրահեղ ռեակցիոն գրաքննիչ»¹²:

Մինչ այս հրատարակությունը, Շուշիում հիմնականում գրքերը տպագրվում էին նախկինում ընդունված կարգով. որևէ գրքի տպագրությունից առաջ այն պետք է ներկայացվեր թեմակալ առաջնորդին, ով էլ դրա մասին տեղեկացնում էր Էջմիածնի Սինոդին (որոշ դեպքերում գրքի մեկենասն անձամբ էր դիմում Սինոդին), որից հետո, ստանալով վերջինիս թույլտվությունը, թեմակալ առաջնորդն ստանձնում էր գրքի տպագրությունը:

Միրզաջան Մահտեսի-Հակոբյանը Շուշիի հայ բողոքականների առաջնորդն էր: Ըստ այդ ժամանակ շրջանառվող լուրերի՝ տարբեր գողություններ կատարելու մեղադրանքով դատարանի վճռով նա մեկուկես տարի գտնվել է քսորի մեջ (Բաքվում)¹³: Վերադառնալով Բաքվից՝ Մ. Մահտեսի-Հակոբյանցը Շուշիի իր տան մեջ գործող ժողովարանին կից հիմնում է սեփական տպարանը¹⁴, վիմագրատունն ու գրավաճառանոցը (գրախանութ)՝ իր որդի Ավագի աջակցությամբ, ով Բաքվում վարպետացել էր տպագրական գործի մեջ: Նոր տպարանը, որտեղ աշխատում էին Միրզաջանի զավակները, հիմնադրման օրվանից բարգավաճում էր՝ ունենալով ինչպես հայկական, այնպես էլ ռուսա-

¹⁰ «Մշակ» 1880, № 69 (Ջօն Վիլիամ Դրեյֆերի «Պատմութիւն մտաւոր զարգացման Եւրոպիոյ»):

¹¹ Շուշիում մեզ հայտնի գիրքը, որի անվանաթերթի դարձերեսին հիշատակված է Կովկասի գրաքննական կոմիտեում գրաքննվելու փաստը, տպագրվել է 1864 թ. Ղարաբաղի հայոց հոգևոր դպրոցի տպարանում (Եզեանց Գ., Ներքին կեանք հին Հայաստանի (Պատմաբանական քննութիւն), թարգմ. Պերճ Պռօշեանցի): Այս գրքից հետո Կովկասի գրաքննական կոմիտեում գրաքննված և Շուշիում հրատարակված՝ մեզ հայտնի հաջորդ գիրքը «Պատմութիւն մտաւոր զարգացման Եւրոպիոյ» աշխատությունն է (1879 թ.):

¹² Սողոմոն խան Մելիք-Մեհրաբովը Կովկասի գրաքննական կոմիտեում աշխատել է 1872–1890 թթ.՝ իբրև տեղական և արևելյան լեզուներով տպագրվող գրքերի ավագ գրաքննիչ, ով աչքի է ընկել հայերեն գրքերի և մամուլի նկատմամբ դրսևորած իր կամայական մոտեցումներով (Մխիթարյան 1974, 105–106):

¹³ «Մեղու Հայաստանի» 1885, № 62 (Ուղեգնացական ակնարկներ):

¹⁴ «Նորք» 1922, նոյեմբեր-դեկտեմբեր, 83 (Իմ հիշողություններից):

կան և թուրքական տառատեսակներ¹⁵: Այս տպարանում է «գրական մկրտություն» ստացել Լեոն (Առաքել Բաբախանյան), ով միաժամանակ հանդիսանում էր տպարանի սրբագրիչը¹⁶: Տպարանի գրաշարն էր Առաքել Մահտեսի-Հակոբյանցը, որի մասին հիշատակություն կա 1881 թ. Շուշիում տպագրված «Խենթ» և «Քնար խօսնակ» գրքերի կազմերի վրա՝ «Գրաշար Առաքել Մահտեսի-Յակոբեանց»: Վերջինս հավանաբար Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցի մերձավոր ազգականն էր:

Ընդհանրապես, Շուշիի տպագրական ասպարեզում Մահտեսի-Հակոբյանցների հայտնվելն իր ժամանակին դժկամորեն է ընդունվել: Պատճառը ոչ միայն նրա՝ բողոքական լինելն էր¹⁷, այլև մինչև անգամ տեղեկություններ էին շրջանառվում, թե արագատիպ տպագրական մեքենա ունեցող Մահտեսի-Հակոբյանցների տպարանը, այդ պահին (1885 թ.) լինելով Շուշիում գործող միակ տպարանը, գերշահույթ էր ապահովում: Արդյունքում՝ Շուշիի հասարակությունը քայլեր ձեռնարկեց՝ վերակենդանացնելու Հայոց հոգևոր տեսչության տպարանը¹⁸:

1877–1885 թթ. լինելով միակ գործող տպարանը Շուշիում՝ այն իր գործունեության առաջին տարիներին առավելաբար իրականացնում էր տպագրական պատվերներ: Այս տեսանկյունից ուշագրավ է Մահտեսի-Հակոբյանցների տպարանի և շուշեցի հրատարակիչ Տիգրան Նազարյանի համագործակցությունը: Դեռևս 1879 թ. Տ. Նազարյանը Շուշիում հիմնադրել էր հրատարակչական գրասենյակ¹⁹, որի շնորհիվ 1881 թ. այստեղ հրատարակվեցին մի

¹⁵ «Ղարաբաղ» 1911, № 1 (Տպագրութեան եւ մամուլի անցեալը Ղարաբաղում): Այս տպարանում հրատարակված որոշ գրքերի վերջում կա հետևյալ տեղեկությունը. «...Տպարանում ընդունվում են ամեն տեսակի պատուհներ հայերէն, ռուսերէն և թուրքերէն լեզուներով, որոնք կատարվում են ձեռնտու գներով և լաւ կերպով»:

¹⁶ «Նորք» 1922, նոյեմբեր-դեկտեմբեր, 83 (Իմ հիշողություններից): «Ղարաբաղ» 1911, № 1 (Տպագրութեան եւ մամուլի անցեալը Ղարաբաղում): Լեո 1925, 32: «Տարագ» 1911, № 7-8, 96:

¹⁷ Սա Մահտեսի-Հակոբյանցների տպարանի գործունեության գլխավոր խոչընդոտն էր: Ըստ Լեոյի, այս տպարանի գործունեության առաջին տարիներին տեղի հայ բողոքականների և Հայ առաքելական եկեղեցու հետևորդների միջև բավական լարվել էին հարաբերությունները (Լեո 1914, 429): Հետաքրքրական է, որ Շուշիի բողոքականները 1887–1888 թթ. նույնիսկ գործուն քայլեր են ձեռնարկել և դիմել Կովկասի կառավարչապետին՝ խնդրելով, որ իրենց համայնքը ճանաչվի առանձին կրոնական միավոր («Նոր-դար» 1895, № 106):

¹⁸ Լեո 1914, 429–430:

¹⁹ Նազարյան 1965, 35: Վարդանյան 1987, 18:

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

քանի գրքեր²⁰ նախատեսված երեխաների, ծնողների, դաստիարակների և մեծ զանգվածների համար²¹:

1881 թ. այս տպարանի և մեկ այլ հրատարակիչ Աբել Ապրեսյանի համագործակցության արդյունքում Շուշիում հրատարակվում է հայ անվանի վիպասան Րաֆֆու «Խենթը» արկածներ վերջին ռուս-թուրքական պատերազմից՝ վեպը, որը մինչ այդ «Մշակ»-ում մաս առ մաս տպագրված հատվածների ամբողջական հրատարակությունն էր: Տեսնելով այդ տպարանում հրատարակության պատրաստվող «Խենթ»-ի առաջին թերթերը՝ Րաֆֆին իր նամակներից մեկում հիշատակում է Շուշիի «փոքրիշատե կանոնավոր» տպարանի մասին՝ նշելով, որ այնտեղի թուղթը բավական լավն է, իսկ տպագրությունը՝ մաքուր²²: «Խենթ»-ի այս հրատարակությունը ցույց է տալիս Մահտեսի-Հակոբյանցների տպարանի կշիռն ու նշանակությունը հայ տպագրության մեջ:

1881 թ. այս տպարանում հրատարակված «Զորս մանրավեպ» աշխատության անվանաթերթի վրա գրված է՝ «Հրատարակութիւն Սիմ. Հախումեանց»: Հետաքրքրական է, որ Սիմեոն Հախումյանցի կողմից հրատարակվող «Գործ» ամսագրի 1882 թ. առաջին համարի կազմի դարձերեսից տեղեկանում ենք, որ Շուշիում գտնվող խմբագրությունը տեղի տպարանի «անկատարության» պատճառով ամսագրի համարները տպագրում է Թիֆլիսի «Պ. Վարդանեանցի և ընկ.» տպարանում, մինչև որ Շուշիում խմբագրությունն ունենա իր սեփական տպարանը²³: Սա նշանակում է, որ ամսագրի հրատարակիչը գոհ չի եղել Մահտեսի-Հակոբյանցների տպարանից՝ հավանաբար նկատի ունենալով տառատեսակների պակասությունը, ինչի մասին վերը խոսեցինք: Ի դեպ, 1882 թ. Մահտեսի-Հակոբյանցների տպարանում հրատարակված որևէ գրքի մասին հիշատակված չէ հայ գրքի մատենագիտական ցանկերում²⁴:

²⁰ Մեր ձեռքի տակ ունենք հետևյալ գրքերը՝ 1) **Տէր-Աւետիքեան Ն.**, Քնար խօսնակ (Տ. Նազարեանի հրատարակութիւն I), Շուշի, 1881, 2) Պօզանի ուսուցչի օրագրից, թարգ.՝ Տ. Նազարեան, (Տ. Նազարեանի հրատարակութիւն II), Շուշի, 1881, 3) **Դոդէ Ալֆօնս**, Երկու մանրավեպ, թարգմ. Ն. Տէր-Աւետիքեան, (Տ. Նազարեանի հրատարակութիւն III), Շուշի, 1881: Հատկանշական է, որ այս հրատարակությունների կազմերը պատրաստված են գեղագիտական բարձր ճաշակով:

²¹ «Մշակ» 1881, № 70 (Նամակ Շուշուց): «Մշակ» 1882, № 9 (Նամակ խմբագրին):

²² **Րաֆֆի** 1964, 548:

²³ «Գործ» 1882, № 1:

²⁴ Հմմտ. Հայ գիրքը 1851–1900 թվականներին, 302–315:

1883 թ. Շուշիի այս տպարանում հրատարակվել է «Արարատի գլուխը» աշխատությունը, որի բաժանորդների ցուցակում կարդում ենք՝ «Աագ Մահտեսի-Յակոբեանց տպարանատէր»²⁵: 1891 թ. նույն տպարանում տպագրված «Տոկոսաբեր աղիասկ. 10-ի (թումանի) վերայ» գրքի կազմի վրա գրված է՝ «Հրատարակիչ՝ Աագ Մահտեսի-Յակոբեանց» և «Տպարան Միրզաջան Մահտեսի-Յակոբեանցի», մինչդեռ գրքի անվանաթերթի նրա նշված է՝ «Հրատարակիչ տպարանատէր Ա. Մ. Մահտեսի-Յակոբեանց»: Սա նշանակում է, որ Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցի որդին՝ Ավագը, միաժամանակ հանդիսանում էր տպարանատերը, իսկ տպարանը շարունակում էր կրել հոր անունը: Միայն 1895 թվականից սկսած է, որ այստեղ տպագրված գրքերից բացակայում են Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցի տպարանի մասին հիշատակությունները, քանի որ նույն տարվա մարտ ամսին վերջինս կնքել էր իր մահկանացուն: Ուշագրավ է, որ այդ առիթով հանդիպող մի վկայության մեջ Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցը հիշատակվում է միայն որպես Շուշիում բողոքականության առաջնորդ²⁶:

Նշենք նաև, որ 1895–1901 թթ. Շուշիի հիշյալ տպարանում տպագրված՝ մեզ հայտնի բոլոր գրքերի անվանաթերթերի վրա տպարանի անունն արդեն հիշատակվում է՝ «Տպարան Աագ Մ. Մահտեսի-Յակոբեանցի» կամ «Տպարան Ա. Մ. Մահտեսի-Յակոբեանցի»: Ի դեպ, մինչ օրս Շուշիի գրահրատարակչական գործունեությանն առնչվող աշխատություններում բավարար չափով հիշատակված չէ Ավագ Մահտեսի-Հակոբյանցը, ով, ինչպես տեսանք, կանգնած էր այս տպարանի ակունքներում:

1883 թ. Ա. Մահտեսի-Հակոբյանցը դիմում է տարածաշրջանի պատկան մարմիններին՝ խնդրելով թույլատրել իր տպարանում շաբաթը երեք անգամ ռուսերենով, հայերենով և թաթար-թուրքերենով հրատարակել «Шушинские объявления» թերթը: Այն նպատակ ուներ տեղեկություններ հաղորդելու Շուշիի անցյալի և ներկայի մասին, ինչպես նաև զանազան նորությունների և հայտարարությունների միջոցով լուսաբանել տեղական կյանքը: Սակայն Շուշիում թերթ հրատարակելու Ա. Մահտեսի-Հակոբյանցի ցանկությունը մնում է անկատար²⁷:

²⁵ Մօրթովցև 1883, 172:

²⁶ «Նոր-դար» 1895, № 62:

²⁷ Վրաստանի ազգային արխիվ, ֆ. 480, ց. 1, գ. 554, թթ. 1–6:

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

Ուշագրավ է, որ Մահտեսի-Հակոբյանցների տպարանում 1887 թ. լույս տեսած մանկական մի վեպի²⁸ մասին «Նոր-դար» օրաթերթում հրատարակված տեղեկության համաձայն²⁹՝ «գրքի տիպն ու թուղթը մաքուր են», ինչը խոսում է որակյալ տպագրության մասին:

XIX դարի վերջում Շուշիում տպագրական գործը ծաղկում էր: Պատահական չէ, որ 1891 թ. տպագրված մի հոդվածում նշվում է, որ Շուշիում տպագրական գործը լավ հիմքերի վրա է դրված: Այդ պահին քաղաքում գործում էին երկու տպարան, որոնցից մեկը, ինչպես նշեցինք վերևում, ուներ արագատիպ տպագրական մեքենա: Հոդվածագիրը հայտնում է նաև, որ Այսրկովկասում Թիֆլիսից հետո հայերեն գրքերի հրատարակության մեջ Շուշին գրավում էր առաջին տեղը՝ այդ իմաստով առաջ անցնելով այնպիսի մեծ ու հայաշատ քաղաքից, ինչպիսին Բաքուն էր³⁰: Հետաքրքրական է, որ 1890 թվականին էլ «Հայոց հոգեւոր տեսչութեան» տպարանը, տպագրական պահանջներից ելնելով, չէր կարողանում մրցել Մահտեսի-Հակոբյանցների տպարանի հետ: Այս մասին խոսելիս Լեոն նաև հիշատակում է, որ Մահտեսի-Հակոբյանցների տպարանը այդ ժամանակահատվածում բավական զարգացած էր³¹: Անկասկած, պետք է նկատի ունենալ, որ վերոհիշատակյալ իրողությունը մեծ մասամբ պայմանավորված էր Մահտեսի-Հակոբյանցների գործունեությամբ: Վերջիններիս տպարանն իր պատվավոր տեղն ուներ տարածաշրջանի հայկական տպարանների շարքում³²՝ միաժամանակ խիստ կարևոր դերակատարում ունենալով Շուշիի տպագրական գործում³³:

Մահտեսի-Հակոբյանցների տպարանում հրատարակվեցին բազմաթիվ արժեքավոր աշխատություններ: Այսպես, 1889 թ. տպագրվեց Մանուկ Աբեղյանի գրի առած «Դաւիթ եւ Միւր. Ժողովրդական դիւցազնական վէպ»-ը, որը «Սասունցի Դավիթ» էպոսի մեկ այլ տարբերակն է: Իսկ 1891 թ. տպագրվեց Ավետիս Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արուեստը. քննական տեսութիւն» մեծարժեք աշխատությունը: Վերջինիս իրական գնահատականը տվել է Եղիշե Չարենցը՝ նշելով, որ «սա է գիրք հանճարեղ և զարմանալի՝

²⁸ Տե՛ս Սօմոյլովիչ 1887:

²⁹ «Նոր-դար» 1888, № 1:

³⁰ «Տարագ» 1891, № 22, 319:

³¹ Հաշիւ, 1890, 17:

³² «Ղարաբաղ» 1911, № 1 (Տպագրութեան եւ մամուլի անցեալը Ղարաբաղում)

³³ «Ղարաբաղ» 1912, № 58 (Տպագրական գործը Շուշիում):

գրված լինելով 90-ական թվականներին մի ինչ-որ անհայտ շուշեցի ուսուցչի ձեռքով»³⁴:

1890-ականների սկզբներին տարածաշրջանում մոլեգնած խոլերան կասեցնելու համար Շուշիի երիտասարդությունը գործուն քայլեր ձեռնարկեց: Հանգանակվեց 750 ուրվի: Հետաքրքրական է, որ այդ գումարի մի մասով Մահտեսի-Հակոբյանցների տպարանում 1892 թ. վերահրատարակվեց թիֆլիսեցի բժիշկ Գ. Տեր-Գրիգորյանցի աշխատասիրած «Խօլերա եւ նրա առաջն առնելու միջոցներ» հանրամատչելի գրքույկը³⁵՝ 5000 տպաքանակով, որն անվճար բաժանվեց Շուշիում և դրա սահմաններից դուրս (անվանաթերթին նշված է՝ «Ամէն տեղ ձրի»):

Հետաքրքրական է, որ հենց 1894 թ. այս տպարանում է հրատարակվել Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի գրադարան-ընթերցարանի³⁶ առաջին հրատարակությունը³⁷: Գրադարան-ընթերցարանը մեծապես նպաստել է Շուշիի գրահրատարակչական կյանքի աշխուժացմանը: Իսկ 1896 թ. նույն տպարանում հրատարակվում է «Ազգագրական հանդէսի» առաջին համարը (Ա. գիրք)³⁸: Այս տպարանի գործունեության մեջ ուրույն տեղ ունեն նաև դասագրքային հրատարակությունները³⁹, որոնցից այբբենարանները տպագրվել են մի քանի անգամ:

³⁴ **Բահաթրյան** 1984, V:

³⁵ Առաջին անգամ այն տպագրվել է 1890 թ. Թիֆլիսում:

³⁶ Այս մասին մանրամասն տե՛ս **Պետոյան** 2019:

³⁷ Տե՛ս **Լազարեւիչ** 1894:

³⁸ Տե՛ս «Ազգագրական հանդէս» 1896: Հանդէսի կազմի վրա նշված է՝ «Շուշի, տպարան Ա. Մահտեսի-Յակոբեանց, 1895», իսկ անվանաթերթի վրա՝ «Շուշի, տպարան Աւագ Մ. Մահտեսի-Յակոբեանցի, 1896»: Թվականների այս տարբերությունը կարող է թյուրիմացության աղիթ տալ, ուստի հարկ համարեցինք այն պարզաբանել: Այսպես, «Ազգագրական հանդէս»-ի առաջին համարի տպագրության ծանուցմանը հանդիպում ենք 1896 թ. «Հանդէս Ամսօրեայ»-ի փետրվար ամսվա համարում, որտեղ «Ազգագրական հանդէս»-ի խմբագիր և հրատարակիչ Ե. Լալայանցը նշում է, որ պատկերազարդ «Ազգագրական հանդէս»-ը պետք է հրատարակվեր Շուշիում ամեն կիսամյակ՝ տարին երկու անգամ: Ծանուցումից տեղեկանում ենք, որ հանդէսի Ա. հատորը (գիրք) տպագրվելու էր տվյալ տարվա՝ 1896 թ. սկզբներին: Սա իր հերթին ապացուցում է «Ազգագրական հանդէս»-ի անվանաթերթի վրա նշված տպագրության թվականի իսկությունը, իսկ սկսած հանդէսի Բ. հատորից (գիրք)՝ տպագրությունը շարունակվել է Թիֆլիսում:

³⁹ Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցը թարգմանել և տպագրել է այբբենարաններ, որոնցից մեր ձեռքի տակ ունենք 1886 թ. տպագրված «Մայրենի լեզու. այբբենարան հայ մանուկների համար» դասագիրքը: 1893 թվին էլ Մ. Մահտեսի-Հակոբյանցը տպագրել է Ներսես վրդ. Մելիք-Թանգյանի «Աշխարհաբարի քերականությունը» կարևոր աշխատութեամբ:

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

Ընդհանրապես, խոսելով Մահտեսի-Հակոբյանցների տպարանի որակական հատկանիշների մասին՝ բավական է հիշատակել 1898 թ. տպագրված «Աղբիւր այբօմ»-ը, որի մասին նույն աշխատության վերջում կարդում ենք. «1898 թ. Աղբիւրի պրէմիան մի շատ շքեղ այբօմ է, 24 գոյնգոյն բուն գեղարեստական նկարներով»: Այս հրատարակությունը շարունակությունն էր դեռ տարիներ առաջ սկսված Տ. Նազարյանի և Մահտեսի-Հակոբյանցների համագործակցության: Իսկ 40 սմ երկարություն և 30 սմ լայնություն ունեցող գունավոր տպագրություն կարող էին իրենց թույլ տալ տարածաշրջանի քիչ տպարաններ:

1903 թ. Շուշիում տպագրված գրքերից հանդիպում են այնպիսիք, որոնց վրա նշված են «Տպարան Ե. Մ. Մահտեսի-Յակովբեանցի», «Տպարան Եղիսաբէ(ե)թ Մ. Մահտեսի-Յակովբեանցի»: Եղիսաբէթը Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցի դուստրն էր և Ավագ Մահտեսի-Հակոբյանցի քույրը, ինչի մասին հուշում է նաև նրանց ազգանունը: Պետք է նշել, որ Եղիսաբէթ Մահտեսի-Հակոբյանցի տպարանը շարունակում էր իրացնել հրատարակչական գործի նույն սկզբունքները: Այս տպարանում 1903–1904 թթ. հրատարակված մի քանի գրքերի մասին տեղեկանում ենք «Հայ գիրքը 1901–1920 թթ.» մատենագիտական ցանկերից⁴⁰: Այս ընթացքում հրատարակված գրքերից, անկասկած, մեծ արժեք և նշանակություն ունի Ներսես վրդ. Մելիք-Թանգյանի «Հայոց եկեղեցական իրաւունքը» գրքի առաջին հատորը («Ներածութիւն եւ աղբիւրներ»), որի երկրորդ հատորը («Կազմակերպութիւն եւ կառավարութիւն») տպագրվել է 1905 թ.՝ արդեն «Բագրատ Տէր-Սահակեանցի տպարան»-ում:

յունը: Իսկ Ավագ Մահտեսի-Հակոբյանցը տպագրել է այլ դասագրքեր ևս, ինչպիսիք են՝ 1) **Ճաղարբէգեան Յ.**, Հայոց պատմութիւն. Հայկազուն եւ Արշակունի թագաւորների ու մարգապանների ժամանակները (պատկերազարդ ձեռնարկ), Շուշի, 1895, 2) **Չիլինկարեան Ա., Ռաշմաճեան Տ.**, Ոյժեր («Բնագիտական ժողովրդական գրադարան» 4), Շուշի, 1899, 3) **Չիլինկարեան Ա., Ռաշմաճեան Տ.**, Մագնիսականութիւն («Բնագիտական ժողովրդական գրադարան» 5), Շուշի, 1900: Հ. Ճաղարբեգյանի, Ա. Չիլինկարյանի և Տ. Ռաշմաճյանի հեղինակած ձեռնարկները տպագրվում էին նաև Այսրկովկասի մի շարք հայաշատ քաղաքներում (Երևան, Ալեքսանդրապոլ, Թիֆլիս և այլուր)՝ որպէս դասագրքեր գործածվելով տեղի հայկական դպրոցներում: Ավագ Մահտեսի-Հակոբյանցը թեմական հոգևոր դպրոցի կարիքների համար վերջինիս նախաձեռնությամբ տպագրել է նաև դպրոցական օրագրեր, որոնցից մեզ հայտնի է 1901 թ. «Յիշատակարան Ղարաբաղի (Արցախի) Հայոց թեմական հոգեւոր դպրանոցի» հրատարակությունը: Այն օրագիր լինելուց զատ, նաև պարունակում է աշակերտների վարքականոններ, որոնք չափազանց կարևոր դեր են խաղացել նրանց դաստիարակության համար:

⁴⁰ Հայ գիրքը 1901–1920 թվականներին, 799:

1905 թվականից հետո Շուշիի սույն տպարանի մասին որևէ տեղեկության չենք հանդիպում, ինչը պայմանավորված էր նույն տարում հայ-թաթարական բախումների հետևանքով առաջացած հրդեհով⁴¹:

Մեր ձեռքի տակ ունենք 1908–1919 թթ. Թիֆլիսում հրատարակված երեք տասնյակի չափ գրքեր, որոնց վրա տպարանի անունը նշված է «Ա. Մահտեսի Յակոբեանց», «Ա. Մահտեսի Յակոբեանց և որդի», «Ա. Մահտեսի Յակոբեանց», «Անդ. Մահտեսի Յակոբեանց», «Էկո(ո)նո(ո)միա», «Էկոնոմիա Մահտեսի Յակոբեանցի»: Փաստորեն, Մահտեսի-Հակոբյանցների գործունեությունը չի սահմանափակվել միայն Շուշիի տպարանով այլ ծավալվել է նաև Այսրկովկասի մշակութային կենտրոն Թիֆլիսում: Հիշյալ տպարանում, բացի գրքերից, հրատարակվել են նաև «Գաղափար» (1916–1917) և «Գործաւոր» (1919) օրաթերթերը, որոնցից առաջինի խմբագիր-հրատարակիչն էր Ավագ Մահտեսի-Հակոբյանցը (1916 թ. 1–69-րդ համարներ): Այս տպարանում են լույս տեսել «Մշակ» օրաթերթի 1907–1909 թթ. մի շարք համարները, ինչպես նաև 1910, 1916–1919 թթ. համարներն ամբողջությամբ: «Մշակ»-ի 1912 թ. մի հրապարակումից տեղեկանում ենք, որ այդ ժամանակ Շուշիում գործում էին միայն Բ. Տեր-Սահակյանցի և Մելքում Բաբաջանյանցի տպարանները⁴²:

Կարևոր է պարզել, թե Մահտեսի-Հակոբյանցների տպարանի (1877–1905) գործունեության ընթացքում որքան գրքեր են հրատարակվել: «Հայ գիրքը 1851–1900 թթ.» և «Հայ գիրքը 1901–1920 թթ.» մատենագիտական ցանկերն⁴³ ուսումնասիրելիս՝ պարզ հաշվարկով տեսանելի է, որ գրեթե երեք տասնամյակ գործած տպարանում հրատարակված գրքերի նկարագրությունները չեն հասնում նույնիսկ 60-ի: Պարզ է, որ հիշյալ մատենագիտական ցանկերը չէին կարող ամբողջապես արտացոլել տվյալ ժամանակահատվածի ողջ տպագիր գրականությունը, քանի որ ոչ բոլոր գրքերն են հասու եղել մատենագետներին: Հետևաբար, այդ ցանկերի տեղեկատվությունը վերջնական չլինելով, միանշանակ չի կարելի որպես հիմք ընդունել, քանի որ դա կարող է թյուրիմացության տեղիք տալ: Այսպես, Շուշիի հասարակական կյանքին վերաբերող մի ուսումնասիրության մեջ նշվում է, որ այս տպարանում 1879–1900 թթ. հրատարակվել է 50 անուն գիրք⁴⁴: Ինչ խոսք, նշված թիվն ամբողջ-

⁴¹ «Ղարաբաղ» 1912, № 58 (Տպագրական գործը Շուշիում):

⁴² «Մշակ» 1912, № 185 (Ղարաբաղի հայոց հոգեւոր տեսչութեան տպարանը):

⁴³ Հայ գիրքը 1851–1900 թվականներին, 836–837: Հայ գիրքը 1901–1920 թվականներին, 799:

⁴⁴ Հարությունյան 2017, 100:

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

ջական չէ, քանի որ, ինչպես տեղեկանում ենք «Ազգագրական հանդես»-ում հրատարակված մի հոդվածից, Մահտեսի-Հակոբյանցների տպարանի գործունեության 20 տարիների ընթացքում (1877–1897) տպարանը հրատարակել է 83 անուն գիրք, իսկ սա նշանակում է, որ տարեկան միջին հաշվով տպագրվել է չորս անուն գիրք, ինչը հոդվածագրի կարծիքով շատ քիչ է⁴⁵։ Բնական է, որ տպարանն իր գործունեության առաջին տարիներին չէր կարող շատ գրքեր հրատարակել, սակայն հետագայում, հմտանալով տպագրական գործի մեջ, տարեկան միջին հաշվարկով չորս անուն գրքից ավելի է տպագրել։ Որպես օրինակ՝ նշենք, որ 1891 թ. այս տպարանում հրատարակվել է ութ անուն գիրք, որոնց մասին տեղեկանում ենք վիճակագրական տվյալներից։

Անցյալում տպագրված հայերեն գրքերի վերաբերյալ վիճակագրական տվյալներ հայթայթելը դյուրին գործ չէ։ Մեր ձեռքի տակ ունենք 1891 թ. Ռուսաստանի տարածքում տպագրված հայերեն գրքերի մասին շուշեցի Պետրոս Զաքարյանի կազմած վիճակագրությունը, համաձայն որի՝ Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող տարածքում տպագրված գրքերի մեջ հայալեզու գրականությունն զբաղեցնում էր 7-րդ տեղը։ Հեղինակը նշում է, որ նույն տարում տպագրվել է 132 անուն հայերեն գիրք, ապա տալիս է այդ գրքերի տպագրության վայրերն ու տպարանները⁴⁶։ Ըստ այս տվյալների՝ Թիֆլիսից և Մոսկվայից հետո տպագրված հայերեն գրքերի քանակով հաջորդը Շուշին է, ուր տպագրվել է 11 անուն գիրք⁴⁷, որից 8-ը՝ Մահտեսի-Հակոբյանցների, իսկ 3-ը՝ Հայոց հոգևոր տեսչության տպարաններում⁴⁸։

Այս տվյալը հիմք է տալիս կարծելու, որ Մահտեսի-Հակոբյանցների տպարանն իր գրեթե երեսնամյա գործունեության ընթացքում միջին հաշվար-

⁴⁵ «Ազգագրական հանդես» 1897, 107 (Տպարաններ)։

⁴⁶ Վիճակագրական այս տվյալները չեն կարող ամբողջական լինել։ Նշենք միայն, որ վերը հիշատակված 132 անուն գրքերը տպագրվել են հայաբնակ 9 քաղաքների 15 տպարաններում։ Բացակայում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանը, ուր 1891 թ. հրատարակվել էին մեկ տասնյակից ավելի գրքեր։

⁴⁷ Վիճակագրական այս տվյալը համընկնում է «Հայ գիրքը 1851–1900 թթ. մատենագիտությունը» հատորում տեղ գտած այն գրքերի նկարագրությունների հետ, որոնք տպագրվել են 1891 թ. Շուշիում։ Նույն թվականին Կովկասում մի շարք լեզուներով տպագրված գրքերի ցանկի 5-րդ համարն էլ ներառում է հայերեն գրքերի տվյալները՝ այբբենական կարգով հիշատակելով գրքերի հեղինակներին, վերնագրերի հակիրճ անվանումներն ու էջերի քանակը, իսկ տպարանի և տպագրավայրի մասին տեղեկությունները բացակայում են («Кавказский календарь», 1892, 47–50)։

⁴⁸ «Մուրճ» 1892, № 7–8, 1173, 1176 (Հայերեն գրքերի հրատարակութեան գործը ռուսահայերի մէջ 1891 թ.)։

կով պետք է հրատարակած լիներ 100-ից ոչ պակաս անուն գիրք՝ նկատի ունենալով, որ տպարանին տարեկան միջին հաշվով բաժին էր ընկնում չորս անուն գիրք: Իհարկե, Եղիսաբեթ Մահտեսի-Հակոբյանցի՝ տպարանատեր եղած ժամանակ տպարանը չուներ այն թափը և աշխատանքների ծավալը, ինչ որ կային իրենից առաջ: Մյուս կողմից, հարկ է նկատել, որ այս տպարանում միայն գրքեր չէին տպագրվում, այլ նաև՝ թռուցիկներ, բացիկներ, հրավիրատոմսեր, հաշվեցույցներ, դպրոցական վկայականներ և այլն:

Շուշիում հրատարակված գրքերից շատերի մասին տեղեկություններ, իսկ երբեմն էլ գրախոսականներ են հանդիպում այդ ժամանակաշրջանի հայկական պարբերականներում: Այդպիսի դեպքերը քիչ չեն եղել, մասնավորապես, Թիֆլիսում տպագրվող «Մուրճ» ամսագրում:

Վերջիններիս հրատարակչական և տպագրական գործունեության արգասիքը չէր կարող ամփոփվել միայն Շուշիում: Ինչպես տեսանք, հրատարակչատնից ու տպարանից բացի՝ նրանք ունեցել են նաև գրավաճառանոց, որն օգնում էր տեղում տարածելու իրենց տպագրած գրականությունը, ինչը կարևոր հանգամանք էր: Այստեղ տպագրված գրքերը միաժամանակ վաճառվում էին Թիֆլիսի տարբեր գրավաճառանոցներում, ինչի մասին տեղեկանում ենք դրանց տպագիր գրացուցակներից⁴⁹:

Նշենք նաև, որ Մահտեսի-Հակոբյանցների տպարանի գրքերից շատերն առկա էին Շուշիի «Հասարակաց ժողովարան»-ի գրադարանում, Կովկասի հայոց բարեգործական ընկերության՝ Շուշիի գրադարան-ընթերցասրահում, որոնց մասին տեղեկանում ենք տպագիր գրացուցակներից⁵⁰: Այս տպարանում է հրատարակվել Շուշիում լույս տեսած գրքերի մեծ մասը, որ հիշատակված է Բաքվի հայ բարեգործական ընկերության⁵¹ և Կովկասի հայոց բարեգործական ընկերության (Թիֆլիս) գրադարանների⁵², մասամբ էլ՝ Թիֆլիսի

⁴⁹ Տե՛ս «Վենդրոնական գրավաճառանոցի հայերէն գրքերի ցուցակ», 1895, 1898, 1904: «Գուտտենբերգ» գրախանութի հայերէն գրքերի ցուցակը, 1908, 1910:

⁵⁰ Տե՛ս Ցուցակ գրոց Շուշոյ հասարակաց ժողովարանի, 1889, 1910: Գրացուցակ Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան Շուշի քաղաքում, 1891, N 2, 1894:

⁵¹ Տե՛ս Գրացուցակ բարձրագոյնս հաստատեալ Բագուայ հայոց մարդասիրական ընկերութեան գրադարանի, 1891, 1894, N 2, 1899, N 3, 1900, 1912:

⁵² Տե՛ս Գրացուցակ հայերէն գրքերի Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան գրադարանի (I մանկական), 1910, (II գեղարուեստական), 1910: Գրացուցակ հայերէն գրքերի Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան գրադարանի (I մանկական, յաւելլուած), 1913, (II գեղարուեստական, յաւելլուած), 1913:

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

Ներսիսյան դպրոցի⁵³, Մոսկվայի Լազարյան ճեմարանի⁵⁴ և Թիֆլիսի Մարիամյան-Հովնանյան օրիորդաց դպրոցի⁵⁵ տպագիր գրացուցակներում:

Այս իրողությունն ինքնին հուշում է, որ Մահտեսի-Հակոբյանցները հետապնդել են ոչ միայն շահութաբեր նպատակ, այլև ունեցել են գրահրատարակչական հոտառություն և ճաշակ, որոնց շնորհիվ հրատարակել են իրենց տպարանի վարկանիշը բարձրացնող գրքեր:

Պետրոս Դուրյանի բանաստեղծությունների ժողովածուի տպագրությունը

Շուշիում հայկական տպագրության պատմության մեջ կան դեպքեր, երբ ինչ-ինչ պատճառներից ելնելով՝ այնտեղ տպագրված որոշ գրքեր չեն պահպանվել կամ առնվազն մեզ չեն հասել: Այսպես, Շուշիի առաջին հրատարակությունը՝ «Լերան քարոզը» գրքուկը (1828 թ., 50 տպաքանակ, 15 էջ)⁵⁶, ոչ միայն մեզ չի հասել, այլև անհայտ է մնացել մատենագետներին և ուսումնասիրողներին: Սակայն եթե այս հրատարակությունը քիչ տպաքանակի պատճառով հասկանալիորեն կարող էր մեր օրերում պահպանված չլիներ, ապա մեզ չհասած մյուս հրատարակությունների դեպքում եղել են այլ գործոններ, ինչպես, օրինակ, հրդեհները և այլն:

Այսպիսի մի ճակատագիր էլ ունեցել է 1905 թ. Ե. Մ. Մահտեսի-Յակովբեանցի տպարանում հրատարակված՝ Պետրոս Դուրյանի «Բանաստեղծությունների ժողովածու»-ն, որի մասին հիշատակված է նույն տարում հրատարակված «Մուրճ» ամսագրում հաճախ տպագրվող «Նոր ստացուած գրքեր» խորագրով ցանկում («Պետրոս Դուրեան, Բանաստեղծութիւնների ժողովածու, հրատ. Մ. Մահտեսի Յակովբեանցի. 1905, Շուշի, 10 կ.»⁵⁷:

Վերջինիս մասին մինչ օրս եղած միակ ընդգրկուն տեղեկությունն ամփոփված է Հ. Աճառյանի հուշերում: Նա նշում է, որ Շուշիի թեմական դպրո-

⁵³ Տե՛ս Մայր ցուցակ մատենից գրադարանի Ներսիսեան հոգետր դպրոցի հայոց, 1893:

⁵⁴ Տե՛ս Каталогъ книгъ и рукописей библиотекъ Лазаревскаго института восточныхъ языковъ, Приложение III. Списокъ книгъ и рукописей, поступившихъ съ 1888 г. по 1-ое Іюня 1903 года, Москва, тип. В. А. Гатцукъ, 1904.

⁵⁵ Տե՛ս Каталогъ книгъ Маріинско-Анановскаго училища, Къ 1-му марта 1912 г., Тифлисъ, тип. Н. Г. Аганьянцъ, 1912.

⁵⁶ Շուշիում առաջին տպագրությունների մասին տե՛ս **Պետոյան** 2020:

⁵⁷ «Մուրճ» 1905, № 6, 143:

Պետոյան Ա.

ցում⁵⁸ իր ուսուցչության տարիներին⁵⁹ դպրոցի մեկ այլ ուսուցչի՝ արցախցի Ավետիս Տեր-Հարությունյանի հետ⁶⁰ հրատարակության են պատրաստել վերոհիշյալ ժողովածուն: Հ. Աճառյանը մասնավորապես հիշատակում է, որ առաջաբանը գրել է Ա. Տեր-Հարությունյանը, իսկ Պ. Դուրյանի կենսագրությունը՝ ինքը: Ժողովածուի վերջում նրանք ավելացրել են բառարան, որտեղ ամփոփված են բանաստեղծի դժվարիմաստ բառերի բացատրությունները՝ տրված Հ. Աճառյանի կողմից: Նա գրում է, որ ժողովածուն տպագրվել է «բողոքական Մահտեսի Բաբայանի տպարանում»: Ինչպես վերը տեսանք, Շուշիում նման անվանումով տպարան չի եղել, հետևաբար կարծում ենք, որ տպարանի անվան սխալ հիշատակումը վրիպակի արդյունք է (պետք է լիներ՝ Մահտեսի-Հակոբյանց):

Հ. Աճառյանն իր հուշերում ավելացնում է, որ Ա. Տեր-Հարությունյանի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ իրենցից յուրաքանչյուրը տպարանից պետք է ստանար Պ. Դուրյանի գրքի 100 օրինակ՝ որպես վարձատրություն իրենց կատարած աշխատանքների: Սակայն, ի տարբերություն Ա. Տեր-Հարությունյանի, Հ. Աճառյանը չհասցրեց ստանալ իր օրինակները, քանի որ տպարանում բռնկված հրդեհի պատճառով այնտեղ մնացած բոլոր գրքերն այրվեցին: Հ. Աճառյանը նաև նշում է, որ ինքը 10 կոպեկով մի օրինակ է գնել ինչ-որ մեկից և ուղարկել Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարան⁶¹:

Փորձեցինք պարզել, թե մեր օրերում այս հրատարակությունից այլ օրինակներ պահպանվե՞լ են, թե՞ ոչ: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հայ գրքի մատենագիտական ցանկերից բացակայում է որևէ տեղեկություն այս մասին:

Հ. Աճառյանի հուշերից տեղեկանում ենք, որ Ա. Տեր-Հարությունյանը ժողովածուի՝ իր ունեցած օրինակները տարել է Նոր Նախիջևանի թեմական

⁵⁸ Բաղդասար մետրոպոլիտի ջանքերով 1838 թ. հիմնադրվում է Շուշիի թեմական դպրոցը: Այն իր գործունեության ընթացքում (1838–1920 թթ.), երբեմն ընդմիջումներով ու վայրիվերումներով, անուրանալի ազդեցություն է ունեցել ոչ միայն Արցախի, այլև առհասարակ արևելահայ կրթական կյանքի վրա (**Սանթրոսյան** 1964, 412-418):

⁵⁹ Իբրև հայոց լեզվի ուսուցիչ՝ Հ. Աճառյանը Շուշիի թեմական դպրոցում դասավանդել է երկու տարի (**Աճառյան** 1967, 260):

⁶⁰ Ավետիս Տեր-Հարությունյանն Արցախի Հաղորդի շրջանի Թաղոտ գյուղից էր: Նա էջմիածնում ուսանելու տարիներին ծանոթացել է Հ. Աճառյանին, որի՝ Շուշիում գտնվելու ժամանակ ավելի են մտերմացել (**Աճառյան** 1967, 265):

⁶¹ **Աճառյան** 1967, 265:

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

դպրոց, որտեղ էլ դրանք վաճառել է⁶²: Մեր փնտրտուքը ցույց տվեց, որ հիշյալ գրքից մեկ օրինակ գտնվում է միայն ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանում, իսկ գրքի թվայնացված օրինակը կարելի է կարդալ «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանի միջոցով⁶³: Այս օրինակն ուսումնասիրելիս հանդիպել ենք բովանդակային մի շարք հետաքրքրական տվյալների, որոնց մասին արժե հիշատակել:

Այսպես, գրքի անվանաթերթին կարդում ենք. «Պետրոս Դուրեան, Բանաստեղծություններ. Ժողովածու, Շուշի, տպարան Եղիսաբեթ Մ. Մահտեսի-Յակովբեանցի, 1905»⁶⁴: Անվանաթերթն աչքի է ընկնում գեղագիտական ձևավորմամբ: Ինչ վերաբերում է բնագրի գեղարվեստական հարդարանքին, պետք է նշել, որ այն թեև պարզ, սակայն ճաշակով տպագրություն է՝ համեմված նուրբ զարդանախշերով:

Ժողովածուն ունի ինն էջանոց առաջաբան, ուր առկա են ոչ միայն կենսագրական տեղեկություններ, այլև գետեղված է Դուրյանի հեղինակությամբ և իր մասին նախորդ 30 տարիներին հրատարակված գրքերի, հոդվածների և տարբեր ուսումնասիրությունների մատենագիտական ցանկը՝ Հ. Աճառյանի ծանոթագրություններով⁶⁵: Առաջաբանն ունի միայն Հ. Աճառյանի ստորագրությունը, սակայն, ինչպես վերջինս նշում է իր հուշերում, ժողովածուն պատրաստել է Ա. Տեր-Հարությունյանի հետ համատեղ: Հասկանալի է, որ եթե ուսումնասիրողը ծանոթ չլինի Հ. Աճառյանի հուշերին, ապա թյուրիմացաբար կարող է կարծել, որ ժողովածուն հրատարակության է պատրաստել միայն նա, քանի որ բնագրում որևէ տեղեկություն չկա հրատարակության պատրաստողների մասին:

Ժողովածուի՝ 1905 թ. Շուշիի տպագրությունը բովանդակային առումով ամբողջությամբ չի կրկնում նախորդ չորս հրատարակությունները⁶⁶: Սույն

⁶² Աճառյան 1967, 265:

⁶³ Տե՛ս <https://bit.ly/39uwRbh> (առ 05.05.2021 թ.):

⁶⁴ Անվանաթերթի վերևի հատվածը մասամբ պատռված է, որից ընթեռնելի է միայն «... Մահտեսի-Յակովբեանցի» գրությունը:

⁶⁵ Առաջաբանի գրքերի բաժնում Հ. Աճառյանը հիշատակել է չորս հրատարակություններ, որոնցից երկուսում թույլ է տվել մատենագիտական վրիպակներ: Այսպես, Կ. Պոլսում տպագրված՝ Պ. Դուրյանի «Տաղք եւ թատերգությունք» գրքի մասին տպագրության թվականը նշել է 1892, մինչդեռ պետք է լինի 1893, իսկ 1904 թ. տպագրված՝ Պ. Դուրյանի «Բանաստեղծություններ. Ժողովածու»-ի (երկրորդ տպագրություն) տպագրության վայրը Վաղարշապատի փոխարեն նշել է Երևան:

⁶⁶ Տե՛ս Դուրեան, 1872: Դուրեան 1893: Դուրեան 1900: Դուրեան 1904:

Պետոյան Ա.

հրատարակության բնագրում Հ. Աճառյանը ոչ միայն որոշ դեպքերում թողել է Ս. Ֆելեկյանի՝ 1893 թ. հրատարակության մեջ կատարած ծանոթագրություններից մի քանիսը, այլև իր կողմից ավելացրել է նորերը: Բերենք մեկ օրինակ: «Առ կոյսն» բանաստեղծությունը (էջ 28) ծանոթագրել է՝ նշելով. «Իտալացի տող յաջորդից մեկ վանկ աւելի չափով»: Իսկ ժողովածուի 54-րդ էջում ավելացրել է «Յաւելուած», որի մասին կարդում ենք. «Յաջորդ յաւելուածի մէջ կը դնենք Դուրեանի նախնական տարիների եւ անյաջող ոտանաւորները, նաեւ նախորդներից մի քանիսի սեւագրութիւնները, որ գտնուել են Պետրոս Դուրեանի թղթերի մէջ»: Այնուհետև տեսնում ենք «Դուրեանի առաջին ոտանաւորը (գրուած 13 տարեկան հասակին)»: Այս բանաստեղծությունը բացակայում է Պ. Դուրյանի նախորդ չորս հրատարակություններում: Ժողովածուի 65–66-րդ չհամարակալված էջերում առկա է «Դժուարիմաց բառեր» վերնագրով 70-ից ավելի բառերի բացատրական բառարան, ինչի մասին հիշատակում է նաև Հ. Աճառյանը:

Եզրակացություններ

Մահտեսի-Հակոբյանցների տպարանը, որպես ժամանակի առաջադեմ մշակութային հաստատություն, Շուշիում իր գործունեության ողջ ընթացքում (1877–1905 թթ.) առաջնակարգ դեր է ունեցել ոչ միայն Արցախի մշակութային կյանքում, այլև տվյալ ժամանակաշրջանի արևելահայ իրականության ու տպագրության մեջ: Այս տպարանն առաջինն էր, որ նոր շունչ հաղորդեց Շուշիի գրահրատարակչական աշխատանքներին՝ առավելաբար հրատարակելով գեղարվեստական, ժամանցային բնույթի, թարգմանական գրքեր և այլն: Վերջիններիս շնորհիվ ավելի դյուրին էր դառնում տեղում հաղորդակից լինել ինչպես մանկական, այնպես էլ գեղարվեստական մի շարք թարգմանական մեծարժեք աշխատություններին:

Մյուս կողմից՝ Մահտեսի-Հակոբյանցների տպարանն ընդարձակում էր իր սահմանները՝ հրատարակելով նաև դասագրքեր, աշխատություններ, նաև՝ 1905 թ. տպագրված Պ. Դուրյանի բանաստեղծությունների ժողովածուն: Հավանաբար այն հիշյալ տպարանի վերջին հրատարակությունն էր: Ժողովածուն, որի մասին մինչ օրս եղած միակ ընդգրկուն տեղեկությունը պահպանվել է Հ. Աճառյանի հուշերում, նույնիսկ ներառված չէ հայ գրքի մատենագիտական ցանկերում: Ուստի սույն ուսումնասիրությունը նաև նպատակ ունի հանրայնացնել այս նորահայտ գրքի մասին տեղեկությունները՝ ցույց տալով

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

դրա կարևորությունը: Այն, իրավամբ, պետք է համարել Շուշիի հայկական տպագրության գոհարներից մեկը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Ազգագրական հանդես», Շուշի, 1896, առաջին տարի, Ա. գիրք, Մահտեսի-Յակոբյանց տպ., Թիֆլիս, 1897, երկրորդ տարի, Բ. գիրք:

Աճառյան Հ. 1967, Կյանքիս հուշերից, Երևան, «Միտք» հրատարակչություն, 458 էջ:

Ավագյան Ս. 1898, Ղարաբաղի մամուլի պատմություն (1828–1920), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 288 էջ:

Բալայան Վ. 2017, Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթության համակարգում, Երևան, «Զանգակ», 560 էջ + 32 էջ ներդիր:

Բահաթրյան Ա. 1984, Հին հայոց տաղաչափական արվեստը. քննական տեսություն, առաջաբանը՝ Է. Զրբաշյանի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., XXXIV, 136 էջ:

«Գործ», Թիֆլիս, 1882, մարտ, № 1:

Գրացուցակ հայերեն գրքերի Կովկասի հայոց բարեգործական ընկերության գրադարանի (I մանկական), Թիֆլիս, տպ. Էպոխա, 1910, 20 էջ:

Գրացուցակ հայերեն գրքերի Կովկասի հայոց բարեգործական ընկերության գրադարանի (II գեղարուեստական), Թիֆլիս, տպ. Էպոխա, 1910, 21–88 էջ:

Գրացուցակ հայերեն գրքերի Կովկասի հայոց բարեգործական ընկերության գրադարանի (I մանկական, յաւելում), Թիֆլիս, տպ. Էպոխա, 1913, 26 էջ:

Գրացուցակ հայերեն գրքերի Կովկասի հայոց բարեգործական ընկերության գրադարանի (II գեղարուեստական, յաւելում), Թիֆլիս, տպ. Էպոխա, 1913, 27–93 էջ:

Գրացուցակ Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշի քաղաքում, Շուշի, տպ. Հայոց հոգեւոր տեսչութեան, 1891, 80 էջ:

Գրացուցակ Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշի քաղաքում N 2, Շուշի, տպ. Հայոց հոգեւոր տեսչութեան, 1894, 70 էջ:

Գրացուցակ Շուշույ հասարակաց ժողովարանի գրադարանի, Շուշի, տպ. Բ. Տէր-Սահակեանի, 1910, 77 էջ:

Գրացուցակ բարձրագոյնս հաստատեալ Բագուայ հայոց մարդասիրական ընկերության գրադարանի, Բագու, տպ. Ս. Տէր-Յովհաննիսեանցի, 1891, 103 էջ:

Գրացուցակ բարձրագոյնս հաստատեալ Բագուայ հայոց մարդասիրական ընկերության գրադարանի (Յաւելում 1891 թ. հրատարակուած գրացուցակի), Բագու, տպ. Արօր, 1894, 46 էջ:

Գրացուցակ բարձրագոյնս հաստատեալ Բագուայ հայոց մարդասիրական ընկերության գրադարանի N 2 (Յաւելում 1891–1894 թթ. հրատարակուած գրացուցակների), Բագու, տպ. Արօր, 1899, 52 էջ:

Գրացուցակ Բագուայ հայոց մարդասիրական ընկերության գրադարանի N 3 (Յաւելում 1891–1894–1899 թթ. հրատարակուած գրացուցակների), Բագու, տպ. Արօր, 1900, 36 էջ:

Գրացուցակ հայերեն գրքերի Բագուայ հայոց մարդասիրական ընկերության գրադարանի, Баку, Электротпечатня газ. «Баку», 1912, 4 չհ., 218, 96, 32 էջ:

Պետոյան Ա.

«Գուտտենբերգ» գրախանութի (հիմնում 1900 թ.) հայերեն գրքերի ցուցակը, Թիֆլիս, տպ. Տ.Մ. Ռոտինեանցի, 1904, 46 էջ:

«Գուտտենբերգ» գրախանութի (հիմնում 1900 թ.) հայերեն գրքերի ցուցակը, Թիֆլիս, տպ. Տ.Մ. Ռոտինեանցի, 1908, 122 էջ:

«Գուտտենբերգ» գրախանութի (հիմնում 1900 թ.) հայերեն գրքերի ցուցակը, Թիֆլիս, տպ. Ն. Աղանեանցի, 1910, 168 էջ:

Դրեպեր Զ.Վ. 1879, Պատմութիւն մտաւոր զարգացման Եւրոպիոյ, թարգմ. Արիստակէս վրդ. Սեդրակեան, հատոր առաջին, Շուշի, տպ. Մ. Մահտեսի Յակոբեանցի, 427, 3 չի. էջ:

Դուրեան Պ. 1872, Տաղք եւ թատերգութիւնք, հրատարակեալ ջանիք Ընթերցասիրաց ընկերութեան ի Իսկիտարու, Կ. Պոլիս, տպ. Արամեանի, Գ, 494 էջ:

Դուրեան Պ. 1893, Տաղք եւ թատերգութիւնք, նամականի, դամբանական, տապանագիր, հաւաքեց Բարսեղ Ե. Էքսերճեան, Կ. Պոլիս, տպ. Արամեանի, 259 էջ:

Դուրեան Պ. 1900, Բանաստեղծութիւններ, Ժողովածու, Բագու, տպ. Արօր, 60 էջ:

Դուրեան Պ. 1904, Բանաստեղծութիւններ, Ժողովածու, երկրորդ տպագրութիւն, Վահարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 60 էջ:

Թէոդիկ 1912, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, հրատ. և տպ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 193, Ա-Ը էջ:

Լազարևիչ Լ. 1894, Հայրս, Շուշի, տպ. Միրզաջան Մահտեսի-Յակոբեանցի, 34 էջ:

Լէօ 1914, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի 1838–1913, Թիֆլիզ, տպ. Ն. Աղանեանի, 692 էջ:

Իշխանյան Ռ. 1981, Հայ գիրքը 1512–1920, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 154 էջ:

Լեո 1925, Անցյալից (հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, հրատարկւթյուն «Խորհրդային Կովկաս»-ի, 482 էջ:

Լևոնյան Գ. 1946, Հայ գիրքը և տպագրութեան արվեստը. պատմական տեսութիւն սկզբից մինչև XX դարը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 255 էջ:

«Կենդրոնական գրավաճառանոցի հայերեն գրքերի ցուցակ», Տիֆլիս, տպ. Մ. Շարաձէի, 1895, 36, 2 չի. էջ: «Կենդրոնական գրավաճառանոցի հայերեն գրքերի ցուցակ», Թիֆլիս, տպ. Մ. Շարաձէի, 1898, 110, 2 չի. էջ:

Հայաստանի ազգային արխիւ, ֆ. 319, ց. 1, գ. 176:

Հայ գիրքը 1851–1900 թվականներին (մատենագիտութիւն), հ. 3, Երևան, «Գիրք», 1999, 860 էջ:

Հայ գիրքը 1901–1920 թվականներին (մատենագիտութիւն), հ. 4, Երևան, «Գիրք», 2007, 818 էջ:

«Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1888, մարտ, № 3:

Հաշիւ Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրանոցի հոգաբարձութեան 1889–1890 ուսումնական տարուայ համար, կազմեց հոգաբարձութեան անդամ Ա. Բաբախանեան, Շուշի, տպ. Հայոց հոգեւոր տեսչութեան, 1890, 28 էջ:

Հարությունյան Մ. 2010, Արցախի պարբերական մամուլի պատմութիւնից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտութիւն 1874–2009 թթ.: Պատմաքննական ներածութեամբ, ծանոթագրութիւններով և մեկնաբանութիւններով, Ստեփանակերտ, «Դիզակ պլոտ», 232 էջ + 4 թերթ ներդիր:

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

Հարությունյան Մ. 2010, Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, Ստեփանակերտ, «Դիզակ պյուն», 160 էջ + 4 թերթ ներդիր:

Հարությունյան Վ. 2017, Բարեգործական ընկերությունների և բարերարների գործունեությունը Շուշիում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին (թեկնածուական ատենախոսություն), Ստեփանակերտ, 2017, 136 էջ:

«Ղարաբաղ», Շուշի, 1911, նոյեմբերի 17, № 1, 1912, օգոստոսի 9, № 58:

Մայր ցուցակ մատենից գրադարանի Ներսիսեան հոգետոյ դպրոցի հայոց, Թիֆլիս, տպ. Մ. Շարաձէ, 1893, 191 էջ:

«Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1885, օգոստոսի 11, № 62:

«Մշակ», Թիֆլիս, 1878, ապրիլ 8 (20), № 57, 1880, ապրիլի 29 (մայիսի 11), № 69, 1881, ապրիլի 22 (մայիսի 4), № 70, 1882, յունուարի 21 (փետրուարի 2), № 9, 1912, օգոստոս 23, № 185:

«Ուրծ», Թիֆլիս, 1892, յուլիս-օգոստոս, № 7-8:

Մխիթարյան Մ. Կովկասի գրաքննական կոմիտեի նյութերից, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1974, № 3, 105–112 էջ:

Մօրթոսլե Դ. 1883, Արարատի գլուխը. ճանապարհորդական տպատրուպիաների նկարագիր, փոխադրեց Առաքել Բաբախանեանցը, Շուշի, տպ. Միրզաջան Մահտեսի-Յակոբեանցի, IV, 175 էջ:

Նազարյան Ս. Տիգրան Նազարյանի կյանքը և գործունեությունը, «ՀՍՄԴ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների», Երևան, 1965, № 3, 35–44 էջ:

«Նորք», Երևան, 1922, գիրք առաջին, նոյեմբեր-դեկտեմբեր:

«Նոր-դար», Թիֆլիս, 1888, յունվարի 5, № 1, 1895, ապրիլի 13, № 62, յունիսի 16, № 106:

Պետոյան Ս. Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի գրադարան-ընթերցարանը (1899–1900 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2019, № 1, 68–82 էջ:

Պետոյան Ս. Նոր փաստեր Շուշիում տպագրված առաջին գրքերի մասին, «Բանբեր Մատենադարանի» Երևան, 2020, № 30, 301–316 էջ:

Պետոյան Ս. Բազելյան բողոքական քարոզիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827–1835 թթ.), «Հայագիտության հարցեր», Երևան, 2021, № 1, 45–65 էջ:

Սոմօյլովիչ 1887, Աշխարհի թագուհու դատաստանը (մանկական վէպ), թարգմանիչ՝ Յ. Ճաղարբեգեանց, Շուշի, տպ. Մ. Մահտեսի Յակոբեանց, 70 էջ:

Սանթրոսյան Մ. 1964, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, Հայպետումանկիրատ, 448 էջ:

Սևյան Վ. 1991, Շուշի (Պատմական ակնարկ), Երևան, «Հայաստան», 128 էջ:

Վարդանյան Վ. 1987, Հայ գրահրատարակության պատմությունից, Երևան, «Հայաստան», 192 էջ:

Վրաստանի ազգային արխիվ, ֆ. 480, ց. 1, գ. 554, թթ. 1–6:

«Տարազ», Թիֆլիս, 1891, յունիսի 16 № 22, 1892, յուլիսի 12, № 26, 1892, յունիսի 19, № 27, 1911, յուլիս-օգոստոս, № 7-8:

Պետոյան Ս.

- Տեր-Գաապարյան Ռ.** 1993, Շուշի քաղաքը, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 125 էջ:
- Րաֆֆի.** 1964, Երկերի ժողովածու, հատոր տասներորդ, Երևան, Պետհրատ, 684 էջ:
- Յուզակ գրոց Շուշույ հասարակաց ժողովարանի, Շուշի, տիպ. Շուшинского Армянска-го Духовного Вѣдомства, 1889, 25 էջ:
- «Кавказский календарь на 1893 годъ» (XLVIII годъ), Тифлисъ, 1892, 692 с.
- Каталогъ книгъ и рукописей библиотекъ Лазаревскаго института восточныхъ языковъ. Приложение III. Списокъ книгъ и рукописей, поступившихъ съ 1888 г. по 1-ое Юня 1903 года, Москва, тип. В. А. Гатцукъ, 1904, с. 349–590.
- Каталогъ книгъ Маріинско-Анановскаго училища. Къ 1-му марта 1912 г., Тифлисъ, тип. Н. Г. Аганьянцъ, 1912, с. 40, 48.

ТИПОГРАФИЯ МАГТЕСИ-АКОПЯНЦЕВ В ШУШИ (1877–1905 гг.)

ПЕТОЯН С.

Резюме

Ключевые слова: Шуши, типографии, Магтеси-Акопянцы, книга, библиография, Рачия Ачарян, Петрос Дурян.

Армянское книгопечатание в Шуши берет начало с 1827 года. Основанные в Шуши армянские типографии сыграли неоспоримую роль в образовательной, духовной и культурной жизни региона.

Одной из таких типографий была типография Магтеси-Акопянцев, где в 1905 году был издан сборник стихов Петроса Дуряна, составленный Рачия Ачаряном и Аветисом Тер-Арутюняном. Большая часть тиража этого издания сгорела в результате пожара в типографии в 1905 г.

THE MAHTESI-HAKOBYANTS' PRINTING HOUSE IN SHUSHI (1877–1905)

PETOYAN S.

Summary

Keywords: Shushi, printing houses, Mahtesi-Hakobyants, book, bibliography, Hrachia Acharyan, Petros Duryan.

Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը

The Armenian typography in Shushi has deep roots dating back to 1827. The Armenian printing houses in Shushi, existed in different years and playing an undeniable role in the educational, spiritual and cultural life of the region.

One of those printing houses was Mahtesi-Hakobyants' printing house, where the collection of Petros Duryan's poems, compiled by Hrachia Acharyan and Avetis Ter-Harutyunyan, was published in 1905. The prevailing majority of the print was burned down because of the fire that occurred in the printing house in 1905. The only information about the book, available up to now, is summarized in Hrachia Acharyan's memoirs.

In this research we intend to summarize the history of Mahtesi-Hakobyants' printing house, as well as popularize the information about this newly discovered book, highlighting its importance.